ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Այլընտրանքային պատմություն

Հեղինակ՝ Տիգրանյան Աշոտ

Դասավանդած առարկա՝ Պատմություն

Խորհրդատու՝ Կարապետյան Վարդան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……..……3

Մաս 1 ……..4

Մաս 2……..……4

Մաս 3……..……..5

Մաս 4……..……7

Մաս 5……..……..9

Մաս 6……..……11

Մաս 7……..……14

Մաս 8……..……..15

Մաս 9……..……16

Մաս 10……..……18

Մաս 11……..……19

Եզրակացություններ և առաջարկություններ…….. 21

Օգտագործված աղբյուրների ցանկ……..……..22

Ներածություն

Արդիականությունն Իրականության արդի ժամանակահատվածի գիտա-իրատեսական դիտարկման կարևոր, բայց ընդամենը մեկ բաղկացուցիչն է: Իսկ Իրականությունը Homo Sapiens-ի՝ տարածաժամանակային կոնտինուում դրսևորման ամբողջականությունն է: Իրականության ընկալման այլընտրանքը մարդու արարչաշնորհյալ իրավունքն է: Իսկ եթե իջնենք իմաստասիրական բարձունքներից (կամ գուցե՞ բարձրանանք Կյանքի էութենական հիմքերից) պատմական, նաև՝ արդի, իրականության այլընտրանքը՝ և՛ մեկնաբանման, և՛ ներկայի ու ապագայի գործողությունների համատեքստում, անփոխարինելի զենք է մարդկության, ազգի և անհատի զինանոցում: Իսկ եթե ավելի պարզ՝ մեր գլխավոր նպատակն է ներքոշարադրյալ տեքստում տեսականորեն և փորձի մատուցմամբ հիմնավորել այլընտրանքային պատմության կրթական արդյունավետությունը:

Մաս 1.

Ի՞նչ է այլընտրանքը

Իրականության (իր անցյալ-ներկա-ապագա եռամիասնական համակարգում) բացահայտման ձգտողների տեսանկյունից այլընտրանքն այն փաստերը, տեսակետներն ու տեսություններն են, որոնք գաղափարական, հոգեբանական, ինչու ոչ, նաև՝ հայտնի ուժերի աշխարհակալական նկրտումների պատճառներով, անտեսվում, աղավաղվում կամ վարկաբեկվում են ակադեմիական հորջորջվող գիտության և նրանց ֆինանսական ու քաղաքական հովանավորների կողմից: Առանց այլընտրանք իրականության մասին պատկերացումները կեղծիքի տիրույթում են, քանզի ամենամեծ սուտը ճշմարտության (տվյալ դեպքում՝ իրականության հոմանիշն է) միայն մի մասի բարձրաձայնումն է:

Մաս 2.

«Այլընտրանքային պատմություն» հասկացությունը

«Այլընտրանքային պատմություն» հասկացությունը տարբեր սահմանումներ ունի: «Այլընտրանքային պատմությունը «անցումային ժանր» է, սահման պատմության և ֆանտաստիկայի միջև: ... Այլընտրանքային պատմությունը Համաշխարհային պատմության այլ ընթացքի և ապագա իրադարձությունների վրա նրա ազդեցության վերլուծություն է:»[1]

«Այլընտրանքային պատմությունը... պատմության (այսինքն՝ գիտության) բաժին է, որն ուսումնասիրում է իրադարձությունների զարգացման հնարավոր տարբերակներն այն դեպքում, եթե անցյալում պատմության ընթացքը փոխվել է:»[2] «Այլընտրանքային պատմությունը»-ը սովորեցնում է պատմական օրինակներով ներկայի հնարավորությունների վերլուծություն: Այլընտրանքային մեթոդը չի ենթադրում բացարձակ երևակայություն, այլ ներկայացնում է հնարավորինս փաստարկված, հիմնավոր այլընտրանքներ՝ պահելով երևակայականի, երազայինի և

[1] Альтернативная история. Циклопедия

[2] Базовые понятия. Альтернативная история

տրամաբանականի, փաստականի հավասարակշռությունը»[3]:

Մեզ հայտնի սահմանումները տեղավորվում են վերոբերյալների միջակայքում: Մեր կարծիքով այլընտրանքային պատմությունն անցյալի իրականության վարկածային պատկերն է, որը ձևավորվում է «Բոլոր փաստերը պետք է ուսումնասիրվեն, բոլոր տեսակետները պետք է քննարկվեն» սկզբունքի համաձայն, և ունի սահմանային գիտության կարգավիճակ: Նաև համոզված ենք, որ այն ունի երկու մակարդակ՝ 1. դասագրքերում ներկայացվող պատմական իրականության մեկնաբանման այլ տեսանկյուն, նաև՝ կանխամտածված կերպով չներկայացվող փաստերի հավելումով; 2. անցյալի իրականության այն էջերի ներկայացում և վերլուծություն, որոնք մերժվում կամ անտեսվում են ակադեմիական գիտության ներկայացուցիչների կողմից:

Մաս 3.
Այլընտրանքային պատմության ուսուցումը

Անցյալի այլընտրանքային ներկայացումը (բնականաբար, ակադեմիականին զուգահեռ) նպաստում է՝ սովորողի մտավոր կարողությունների զարգացմանը, գիտությամբ զբաղվելու ցանկության խթանմանը, քաղաքացու արժեքային համակարգի ձևավորմանը:

Ինձ վստահված դասարաններում այդպիսի մոտեցման կենսագործման արդյունքում ձևավորվում են՝ սեփական տեսակետը ձևակերպելու և պաշտպանելու, ինչպես նաև՝ ընդդիմախոսի փաստարկներն ընկալելու հմտություն, օտար լեզուների իմացության կատարելագործում, ուսումնասիրվող կամ հետազոտվող թեմայի աղբյուրների ընտրության և օգտագործման հմտության ամրակայում, գրավոր և բանավոր խոսքի զարգացում, սովորողի սոցիալականացման գործընթացի արդյունավետության բարձրացում:

Պատմությանն այլընտրանքային մոտեցումը նաև մեթոդ է, որի կիրառումը հարստացնում է ուսուցչի գործունեության բովանդակությունը:

[3] Մեդիամաքսի «Այլընտրանքային պատմություն» նախագծի բացատրականից

Ներկայացնում եմ ընտրելու իրավունքի դրսևորումներ՝

- VI դասարանցիների առարկայական ծրագրի երկու տարբերակ՝ «Պատմություն» և «Երեխաների համաշխարհային պատմությունը Հին աշխարհի պատմության համատեքստում»,
- տնային աշխատանքում ներառված առաջադրանքների, (օրինակ՝ VIII դասարանցիների) ընտրություն, թարգմանական գործունեություն, ուսումնա-հետազոտական աշխատանք (նաև՝ սովորողի ձևակերպած թեմայով),
- օգտագործվող աղբյուրների ընտրություն,
- նախագծերի ընտրության հնարավորություն ՝ «ՈՒԳԸ-ԱԳԸ. կրթական կամուրջներ», «Այլընտրանքային պատմություն», «Հետազոտական արշավային ճամբար», «Ների՛ր,աբբահայր», «Բռնադատվածներ», «Ամբողջատիրություն», «Միասնական Տիեզերք», «Մեր թաղը», «Պատմության վերակառուցում»:

Այլընտրանքային պատմության Ա մակարդակն ապահովվում է և՛ թեմայի բացատրության, և՛ առաջադրանքների ձևակերպման (օր.՝ 1. Սահմանել «Դպրոց» և «Քննություն» հասկացությունները: 2. Թվարկել նախնադարում երեխաներին ուսուցանվող գիտելիքները: 3. Նկարագրել նախնադարյան քննության որևէ օրինակ: 4. Համեմատել նախնադարի և ժամանակակից դպրոցները), և՛ սովորողի փաստարկված անհամաձայնության խրախուսման մեթոդներով, ինչպես նաև վերը շարադրված գործունեության ձևերով: Բ մակարդակը հիմնականում ապահովվում է նախագծային գործունեության, հատկապես՝ «Այլընտրանքային պատմություն» և «Միասնական Տիեզերք» նախագծերի իրականացման ժամանակ: Թարգմանական գործունեություն և ուսումնահետազոտական աշխատանք կատարելիս ևս սովորողները երբեմն ընտրում են Բ մակարդակի այլընտրանքային պատմության թեմաներ:

Այլընտրանքային պատմության ուսուցման երկու գլխավոր նպատակներն են՝

1. սովորողների կարողությունների (սահմանել, համեմատել, նկարագրել, բնութագրել, ապացուցել և այլն) զարգացումը և հմտությունների (այսինքն՝ կարողությունների բարձրագույն աստիճանի) ձևավորումը,
2. ազգային-պետական հիմնախնդիրներին համարժեք անհատական և խմբային արժեհամակարգերի ամրակայմանը նպաստելը:

Այլընտրանքային մոտեցումը (հատկապես Ա մակարդակը) կիրառելի է ոչ միայն պատմության դասավանդման ժամանակ:

Մաս 4.
Սովորողի՝ առարկայական ծրագիր ընտրելու հնարավորության իրացման փորձ

Ընտրության Արարչադիր իրավունքի կիրառման ոլորտների ավելացումը նպաստում է մարդու, առավել ևս՝ սովորողի, ինքնագնահատականի բարձրացմանը և համագործակցելու պատրաստակամության ամրապնդմանը: Այդ իսկ պատճառով ողջունելով կրթահամալիրի ավագ դպրոցում ուսուցիչ ընտրելու սովորողի իրավունքի կիրարկումը՝ որոշեցի իմ վեցերորդ դասարանցիներին ևս ընտրելու հնարավորություն տալ: Այս դեպքում՝ դասավանդվող առարկայի ծրագիրն ընտրելու հնարավորություն: Նրանց ներկայացրեցի երկու ծրագիր՝ «Պատմություն» և «Երեխաների համաշխարհային պատմությունը հին աշխարհի պատմության համատեքստում»: Սովորողները մտորումներից, ծնողների և ընկերների հետ քննարկումներից հետո կատարեցին իրենց ընտրությունը: Իմ առաջարկությամբ նրանք նաև գրավոր բացատրեցին այս կամ այն ծրագիրն ընտրելու իրենց մոտեցումները: Ահա այդ գրառումներից մի քանիսը:

Մկրտչյան Էլեն. «Ես ընտրել եմ «Երեխաների համաշխարհային պատմությունը», որովհետև այնտեղ ներառվում են հետաքրքիր հետազոտական աշխատանքներ, ճամփորդություններ, գիտելիքները հարստացնելու հնարավորություն»:

Խաչատրյան Արշիլ. «Ես հետազոտել եմ «Պատմություն» և «Երեխաների համաշխարհային պատմություն» ծրագրերը: Ես ընտրել եմ «Երեխաների համաշխարհային պատմությունն» առաջին հերթին նրա համար, որովհետև ես երեխա եմ: Ի տարբերություն երկրորդ տարբերակի առաջինը, այսպես ասած, աչքի տակով է, իսկ երկրորդում ավելի կոնկրետ է գնահատականը, անգամ տոկոսներով է նշվում: Ես նկատեցի ճամփորդությունները ամբողջ տարվա համար: Այն նաև ավելի հետաքրքիր է»:

Ղարիբյան Դավիթ. «Ես ընտրել եմ «Երեխաների համաշխարհային պատմությունը», որովհետև ինձ հետաքրքիր է, թե ինչպես են մեծացել երեխաները Եգիպտոսում, Ֆրանսիայում և այլ երկրներում: Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես են նրանք ապրել քարի դարում և ինչ զբաղմունք են ունեցել: Ուզում եմ պարզել քարանձավների

նկարները նրա՞նք են նկարել և ինչո՞վ, և ինչպե՞ս են նկարել, քանի որ այդ ժամանակ պետքական պարագաներ չեն եղել: Ես ուրիշ բաներ էլ եմ ուզում պարզել և դրա համար էլ ընտրել եմ «Երեխաների համաշխարհային պատմությունը»:

Հարությունյան Դավիթ. «Ես երկու ծրագրերից ընտրել եմ «Երեխաների համաշխարհային պատմությունը»: Ինձ դուր եկավ այդ ծրագիրը, որովհետև ես միշտ ուզեցել եմ իմանալ , թե ինչպես են քայլել, ինչով են զբաղվել մի քանի հազար տարիներ առաջվա երեխաները»:

Վարդումյան Նանե. «Ես ընտրել եմ «Երեխաների համաշխարհային պատմությունը», որովհետև այն ինձ ավելի է հետաքրքրում, քան պատմությունը: Ես ուզում եմ սովորել իմ հասակակցի մասին»:

Ավագյան Աստղիկ. «Նախ՝ ինձ հետաքրքրում է, թե ինչպես էր երեխաների կյանքը հնադարում, ինչպես էին նրանք ապրում, ինչ խաղեր էին խաղում: Հետաքրքրում է, թե երեխաները ինչ կարող էին անել հնադարում: Ուզում եմ իմանալ՝ արդյո՞ք երեխաները ընկերանում էին: Ի՞նչ էին սովորում իրենց ծնողներից: Ինչո՞վ էին զբաղվում ազատ ժամանակ, ինչո՞վ էին հետաքրքրված: Եվ վերջում. ինձ վերջ ի վերջո հետաքրքիր է, թե ինչպես են երեխաներն ապրել»:

Շահնազարյան Դավիթ. «Ես ընտրել եմ «Պատմությունը», որովհետև ինձ հետաքրքրում են տարբեր երկրներում ինչպես են ապրում, ինչ պատերազմներ են եղել, ինչպիսին է մարդկանց ապրելակերպը տարբեր երկրներում, նրանց զարգացվածությունը»: Աղաբեկյան Գոռ. «Ես ընտրել եմ «Պատմություն» ծրագիրը, որովհետև ես ուզում եմ իմանալ ավելի շատ բաներ մարդկանց մասին: Ես նաև ուզում եմ իմանալ դինոզավրերի, բուրգերի, աստվածների և տիեզերքի մասին»:

Միկաիլի Մարկ. «Ես ընտրում եմ «Երեխաների համաշխարհային պատմությունը», որովհետև սիրում եմ նախագծեր և ճամփորդություններ: Նաև ինձ հետաքրքրում է, թե ինչ էին երեխաներն անում հին ժամանակներում»: Հայրիյան Սերգեյ. «Ես ծանոթացել եմ երկու ծրագրի հետ: Դրանցից մեկն է «Պատմությունը» և մյուսը «Երեխաների համաշխարհային պատմությունը»: Ես ընտրել «Պատմությունը», որովհետև... նախ՝ միանգամից չեմ ընտրել. նայեցի բոլոր ծրագրերը և իմացա, որ Պատմության վրա աշխատելը ինձ համար ավելի հարմար է: Ճիշտ է, ես համաձայն եմ, որ «Երեխաների համաշխարհային պատմությունը» ավելի հետաքրքիր է, բայց այնտեղ ավելի շատ մենք ուշադրություն ենք դարձնում երեխաների վրա: Իսկ «Պատմության» ծրագրում մենք ուշադրություն ենք դարձնում ամեն ինչի վրա: Ինձ բոլորը ասում են, որ «Երեխաների հաշմաշխարհային պատմությունը» ավելի հեշտ է, բայց իրականում հեշտ ու դժվար չկա: Դա կախված է, թե արդյո՞ք դու ուզում ես այդ բանը սովորել, թե՞ ոչ»:

Մաս 5.
Այլընտրանքային պատմությունը «Պատմություն» առարկայի դասավանդման առանցքային բաղկացուցիչ

Պատմության, իմա՝ անցյալի իրականության, իմացության անհրաժեշտության աշակերտական համոզվածության ձևավորումը և պատմության դասերի տեսա – գործնական կիրառման բնածին կարողությունների զարգացումը դպրոցական կրթության առանցքային նպատակներից են: Վերջիններիս հասնելու մայրուղին դասահարթակի (դասասենյակ, ընթերցասրահ, ներքին բակ, թանգարան, արխիվ, պատմական հուշարձան և տեղանք, վիրտուալ իրականություն և այլք) և փաստերի ու տեսակետների աղբյուրների (ուսումնական ձեռնարկներ, պատմիչների երկասիրություններ, գիտա–հանրամատչելի և գեղարվեստական գրականություն, վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր, արխիվային փաստաթղթեր և այլք) առավելագույն ընդարձակումն է: Ենթադրելի է, որ այսպիսի մոտեցման դեպքում դասի կառուցվածքի փոփոխությունն անխուսափելի է: Որպեսզի սույն փոքրածավալ հոդվածը չվերածվի գիտական ընդարձակ թեզի, համառոտագրենք լոկ երկու օրինակ՝ 1. Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրման ժամանակ դասի գլխավոր կառուցվածքային միավորը դառնում է եզրակացությունների բախումն ու համադրումը; 2. Գիտա–գեղարվեստական աղբյուրների ուսումնասիրման արդյունքների ներկայացման ժամանակ դասի գլխավոր կառուցվածքային միավորը դառնում է սովորողի (սովորողների խմբի) բանավոր խոսքը:

Փակագծերում նշենք, որ վերոշարադրյալ գործողությունների համակարգը նպաստում է սոցիալապես ակտիվ, համագործակցության և մրցակցության ռազմավարության ու մարտավարության մեխանիզմներին տիրապետող անհատականության ձևավորմանը:

Այսպիսով՝ պատմության դասի կառուցվածքային փոփոխությունների հարացույցն ուղղորդված է կրթական տարածքի հետևողական ընդարձակմանը և դրանից բխող՝ դասագործընթացում կառուցվածքային միավորների զուգորդման տարբերակների բազմապատկմանը և հետազոտական ու ստեղծագործական ակնհայտ ներուժ ունեցող մեթոդների (մտագրոհ, քննարկում–բանավեճ, խմբային հետազոտություն, վերլուծությունների գրավոր և բանավոր ներկայացում, օտարալեզու աղբյուրների օգտագործում և այլն) բացահայտ գերակշռմանը:

Պատմության դասի բովանդակային հիմնախնդիրները քննարկելիս չպետք է մոռանալ երեք կարևորագույն իրողություն՝ 1. պատմության դասերի իրատեսական յուրացումը և քաղաքականության բազիս դարձնելն ունի ռազմավարական նշանակություն 2. պատմության իմացություն = հասկացությունների սահմանում + օրինաչափությունների էության ըմբռնում + առանձնահատկությունների երկու տարատեսակների՝ զուտ առանձնահատկություն և օրինաչափությունների դրսևորման առանձնահատկություն, յուրացում + ժամանակագրության իմացություն + այլընտրանքային (ոչ ակադեմիական) տեսությունների ու վարկածների հաշվի առնում + փաստերի աղբյուրների հնարավորինս տարաբնույթություն, տարաուղղվածություն և բազմալեզվություն 3. պատմությունը գրում են հաղթողները:

Եռամեծար իմաստասեր Դավիթ Անհաղթը պատգամել է. «…Եթէ կամի ոք յաղագս իրի ուրուք ճշմարտաբար խորհել և մտածել, պարտ է նախ դիտել զնորին իրի բնութիւնն, այսինքն զսահմանն:…Քանզի որ ոչն գիտէ զսահմանն, վրիպէ յայնցանեացն ամենեցունց, որք հետևիլն բնաւորեցան նորին իրի…..»: Փորձս վկայում է, որ հասկացությունների սահմանման անտեսումը պատմության դասավանդման խոցելի, բայց, ցավոք, տարածված կողմերից մեկն է: Առանց գիտության շենքի քարերի՝ հասկացությունների, և շաղախի՝ օրինաչափությունների ու առանձնահատկությունների, էութենական իմացության շեշտադրման, պատմության ուսուցումը լավագույն դեպքում վերածվում է հույզերի դրսևորման: Չժխտելով պատմության զգացմունքային կողմի կարևորությունը՝ հարկ եմ համարում ընդգծել, որ այդպիսի մոտեցման գերակշռությունը հանգեցնում է պատմության դասերի ռոմանտիկական, ազգավնաս և պետականաքանդ աղավաղման:

Որպեսզի սովորողին հասու լինի պատմության դիալեկտիկան, այլ կերպ ասած՝ պատմական օրինաչափությունների ու առանձնահատկությունների դրսևորումը, էթնոսի, սոցիալական խմբի և անհատի դերը, օգտագործում եմ վարժությունների և խնդիրների համակարգ: Ստորև բերվում են օրինակներ՝

1. Սահմանել «Ինդուստրացում», «2-րդ հանրապետություն», «Կոլեկտիվացում», «Պետական ահաբեկչություն», «Խորհրդային մշակույթ», «Միջպատերազմական Եվրոպա», «Մարտիրոս Սարյան», «Պատմական օրինաչափություն», «Քաղաքացիական պատերազմ»,«Ֆաշիստական Իտալիա» հասկացությունները;
2. Ապացուցել, որ ԽՍՀՄ-ում պետական ահաբեկչությունն անխուսափելի էր:
3. Համեմատել Խորհրդային և Արևմտյան իրականությունները:

4. Թվարկել Ճապոնիայի պարտության հիմնական, երկրորդական և երրորդական պատճառները:
5. Այլընտրանքային պատմություն՝ Հիտլերը դարձել է նկարիչ և չի զբաղվում քաղաքականությամբ, Ստալինը հանկարծամահ է եղել 1935 թվականին և ԽՍՀՄ-ը էվոյուցիոն ճանապարհով գնում է դեպի ժողովրդավարություն, Ռուզվելտը չի հաղթել նախագահական ընտրություններում: Ի՞նչ անել, որ 2-րդ աշխարհամարտը կայանա:
6. Պատմական իրականություն – Նապոլեոն – Կեսար – Ալեքսանդր Մակեդոնացի – ԼենկԹեմուր – Չինգիզ խան – x – y – z = a:
7. 20-րդ դար+19-րդ դար+նոր գաղափարախոսություններ : հին գաղափարախոսություններ-հնացած գաղափարախոսություններ*x*առաջին աշխարհամարտ=X;
8. Այլընտրանքային պատմություն՝Գերմանիան և ԽՍՀՄ-ը չեն պատերազմում, Ճապոնիան հարձակվում է ԽՍՀՄ-ի վրա, ԱՄՆ-ը չի մտնում պատերազմի մեջ: Երբ կավարտվի պատերազմը: Պատասխանը հիմնավորել:
9. Ֆրանսիա+Անգլիա+ԱՄՆ – Գերմանիա – Իտալիա + 18-րդ դար= x:
10. Ապացուցեք կամ հերքեք հետևյալ տեսակետները՝ «Առաջին հանրապետության ստեղծումը հրաշք էր» և «Առաջին հանրապետության կործանումն անխուսափելի էր»;
11. Դիտած ֆիլմերից ի՞նչ նոր տեղեկություններ ստացաք: Հերքեք կամ հաստատեք ֆիլմերում արտահայտված տեսակետներից որևէ մեկը:

Այսպիսով, պատմության դասի բովանդակային փոփոխությունների հարացույցն ուղղորդված է պատմական իրականության եռամիասնական՝ գիտական, արժեքային և զգացմունքային, կառուցողական գործողությունների դրդող ընկալմանը:

Մաս 6.

«Այլընտրանքային պատմություն» նախագիծը

Նպատակ՝

1. Պատմության այլընտրանքային էլեկտրոնային ուսումնական ձեռնարկի ստեղծում:

Խնդիրներ՝

1. Սովորողների տեխնոլոգիական, հետազոտական, ճարտասանական և համագործակցային հմտությունների զարգացում;
2. Օտար լեզուների գործնական կիրառում:

Մանկավարժական մոտեցումներ՝

1.Գիտականություն;

2.Ամենօրյա հետազոտական աշխատանք;

3.Օտար լեզուն՝ աշխատանքային գործիք;

4.Սովորողի սոցիալականացում;

5. Ինտերակտիվությունը որպես մեթոդաբանություն և կրթական իրականության մթնոլորտ:

Միջավայր՝

1. Ֆիզիկական միջավայր /դասասենյակ, լաբորատորիա,բակ, զբոսայգի, թանգարան, արխիվ, աշխարհագրական և պատմական օբյեկտներ, կրթական և գիտական հաստատություններ; նեթբուք, նոթբուք, պլանշետ և այլ գաջետներ/

2. Վիրտուալ միջավայր /կայքեր, բլոգեր, սոցցանցեր և էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներ/:

Նախագծային գործունեության կազմակերպումը՝

1. Քննարկում;

2. Դասախոսություն;

3. Ք ննարկում այլ մասնագետի մասնակցությամբ;

4. Ինտերակտիվ դաս;

5. Քննարկման նախապատրաստություն սովորողի կամ սովորողների խմբի հետ;

6. Համատեղ դաս-քննարկում այլ կրթական հաստատության սովորողների հետ;

7. Արտակրթահամալիրային մասնագետի դաս;

8.Գիտահանրամատչելի ֆիլմերի թարգմանություն;

9. Պատմական վերակառուցման գործունեություն;

10. Դաս-շնորհանդես;

11. Արշավային դաս;

12.Գիտահանրամատչելի հեղինակային և թարգմանական հոդվածների հրապարակում:

Բովանդակություն

Անցյալը 21-րդ դարի պատուհանից

1. *Հնագույն քաղաքակրթություններ*

1.1. Լեմուրիա

1.2. Հիպերբորեա

1.3. Ատլանտիդա

1.4. Այլ քաղաքակրթություններ

2. *Մարդու առաջացումը*

2.1. Առասպելներ մարդու առաջացման մասին

2.2. Կրոնները մարդու առաջացման մասին

2.3. Գիտությունը մարդու առաջացման մասին

3. *Պատմությունը և անհատը*

3.1. Պատմության մեջ անհատի դերի մասին պատկերացումները տարբեր դարաշրջաններում;

3.2. Պատմության մեջ անհատի դերի մասին պատկերացումները տարբեր էթնոսների մոտ;

3.3. Համաշխարհային մասշտաբի անհատականություններ;

3.4. Էթնիկական մասշտաբի անհատականություններ;

3.5. Հանճարեղության առեղծվածները;

3.6. Ինդիգո երեխաներ:

4. *Մարդկանց ընդհանրություն*

4.1. Մարդկանց առաջին բնակավայրերը

4.2. Տոհմը եւ ցեղը որպես մարդկային կայուն խմբեր

4.3. Մոռացված գիտելիքներ

5. *Հայերի ծագումնաբանությունը*

5.1. Մարդու առաջին քայլերը հայկական լեռնաշխարհում

5.2. Հայկական քաղաքակրթության առաջացումը

6. *Կրոններ*

6.1. Կրոնի առաջացումը եւ առաջին ձևերը

6.2. Ազգային կրոններ

6.3. Համաշխարհային կրոններ

7. *Պետություն*

7.1. Պետության առաջացում

7.2. Պետության փոփոխությունը պատմության ընթացքում

7.3. Պետությունների հարաբերությունները

7.4. Մեր հասակակիցը տարբեր պետություններում

8. *Հայտնագործություններ*

8.1. Գիտություն

8.2. Տեխնոլոգիաներ

8.3. Կենցաղ

9. *Հայերը եւ աշխարհը*

9.1.Հայերի ներդրումը համաշխարհային տնտեսության մեջ

9.2. Հայերի ներդրումը համաշխարհային քաղաքականության մեջ

9.3. Հայերի ներդրումը համաշխարհային ռազմական գործի մեջ

9.4. Հայեր ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ

9.5. Այլ էթնոսների հետ հայերի հարաբերության սկզբունքները

9.6. Հայերի թշնամիներն ու դաշնակիցները. պատճառներ եւ հետեւանքներ

9.7. Հայերը եւ համաշխարհային քաղաքակրթությունը 21-րդ դարում

Մաս 7.

Ինչու՞ են սովորողները մասնակցում նախագծին

Նրանց մասնակցության դրդապատճառները բազմաթիվ են, և դրանցից յուրաքանչյուրի պարզաբանումը մի առանձին մեթոդական հոդվածի նյութ է: Ուստի ես լոկ կթվարկեմ դրանք, առանց այդ ցուցակի ավարտունության հավակնության: Ընդգծեմ, որ թվարկումը վարկանիշային չէ, քանզի չի անցկացվել համապատասխան ընկերաբանական ուսումնասիրություն, որովհետև աշխատանքային խմբի համալրումը շարունակվում է: Այսպիսով, սովորողները մասնակցում են նախագծին, որովհետև՝

1. առկա է ինքնակրթության ներքին պահանջ.
2. ձգտում է օգտագործել օտար լեզվի գործնական իմացությունը կատարելագործելու ևս մի հնարավորություն.
3. ցանկանում է ընկերոջ հետ համագործակցել նոր ոլորտում.
4. իրեն զգացնել է տալիս մրցակցության ոգին.
5. հավակնում է ավելի բարձր գնահատանիշի.

6. դրսևորում է ևս մի ասպարեզում ինքնահաստատվելու ձգտում (երբ սովորողն է նախագծին մասնակցելու հայտ ներկայացնում).
7. հարգում է ուսուցչի խոսքը (երբ սովորողը չի մերժում նախագծին մասնակցելու իմ առաջարկը, ի դեպ եղել են նաև հարգալից և հիմնավոր բացատրությամբ, օր.՝ բազմակողմանի զբաղվածությունը, մերժման դեպքեր).
8. սովորողը հետաքրքրված է անցյալի իրականության բացահայտմամբ.
9. ինձ հետ հաղորդակցվելը և համատեղ աշխատանքը սովորողի կարծիքով իր համար օգտակար է...

Մաս 8.

Ովքե՞ր են նախագծի շահառուները

Բնականաբար, առաջին հերթին, իրենք՝ նախագծի մասնակիցները, հատկապես նրանք, ովքեր կհամահեղինակեն էլեկտրոնային ուսումնական ձեռնարկի բովանդակության շարադրանքը, որը կսկսվի գարնանային ուսումնական ճամբարի ժամանակ: Հասկանալի է, որ նյութերի կուտակման, կամ այլ ձևակերպմամբ՝ թարգմանական փուլը, զուգահեռաբար կշարունակվի:

Շահառուների հաջորդ խումբը կազմում են նրանք, ում ստեղծագործական, կամ գոնե՝ քննադատական, միտքը պատմական կաղապարներին այլընտրանք է փնտրում:

Ինչքան էլ առաջին հայացքից զարմանալի թվա, շահառուների երրորդ խումբը կազմում են նրանք, ովքեր պետք է ինքնահաստատվեն՝ իրենց հակոտնյա մտածողությունը և նրա արդյունքները թիրախ դարձնելով:

Այսինքն՝ նախագծի իրականացումն ունի ինքնահատուկ բարդություն, այն անցնում է պայքարի բովով: Վերջին իրողությունն անտարակույս օգտակար գործոն է աշխատանքային խմբի անդամների կամքի ձևավորման և/կամ ամրակայման գործընթացում:

Մաս 9.

Նախագծային ուսուցման մեր փորձի որոշ եզրահանգումներ

Նախագծային ուսուցումը դասավանդողի/դասավանդողների և սովորողի/սովորողների համատեղ կրթական գործունեությունն է, որը նպատակաուղղված է որևէ հիմնախնդրի/հիմնախնդիրների տեսական և/կամ գործնական լուծմանը:

Նախագծային ուսուցման հիմնական նպատակներն են՝

1. Նպաստել յուրաքանչյուր մասնակցի ինքնագնահատականի բարձրացմանը՝

   1.1. Հնարավորություն ստեղծել, որ յուրաքանչյուրն իրեն տեսնի որպես ընդունակ և իրազեկ անհատականություն:
   1.2. Մասնակցի մոտ զարգացնել իր և մյուսների դրական կերպարը:
   1.3. Սովորողի մոտ ձևավորել իրեն և մյուսներին ստույգորեն գնահատելու հմտություն:

2. Ոգեշնչել սովորողներին՝ զարգացնելու կարողությունների «Համագործակցություն» համակարգը:

3. Ապահովել սովորողի քննադատական մտածողության զարգացման մեխանիզմը, դրված խնդիրը լուծելու ուղիների որոնման հմտության ձևավորումը:

4. Զարգացնել սովորողների հետազոտական կարողությունները (բացահայտել հիմնախնդիրը, հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, դիտարկել գործընթացները, ձևակերպել վարկածներ, ընդհանրացնել և այլն) և վերլուծական մտածողությունը:

Իրականացվող նախագծերն ունեն հետևյալ տիպաբանական հատկանիշները՝

- ըստ սովորողների գերակշռող գործունեության (առարկայորեն կողմնորոշված, հետազոտական, ստեղծագործական, տեղեկատվական, դերային),
- ըստ բովանդակության (միջառարկայական և մոնոնախագծեր),
- ըստ հարաբերությունների բնույթի (ներդասարանային, միջդասարանային, տարածաշրջանային, համապետական, միջազգային),

- ըստ տևողության (կարճաժամկետ՝ մեկ ամսից ոչ պակաս, միջնաժամկետ՝ մինչև վեց ամիս, երկարաժամկետ՝ մեկ տարուց ոչ պակաս, անժամկետ),
- ըստ մասնակիցների թվի (անհատական, խմբային, միջխմբային):

Նախագծային ուսուցում կազմակերպելիս հարկ է ապահովել նախագծի իրականացման փուլերի ճիշտ հերթագայությունը և նրանց հատկացվելիք ժամանակի իրատեսական համամասնությունը:

Նախագծային աշխատանքի փուլերն են՝

1. Նպատակադրում
2. Գործունեության տարբերակների քննարկում, միջոցների և եղանակների ընտրություն
3. Պարտականությունների բաշխում
4. Ինքնակրթություն և գիտելիքների արդիականացում
5. Հետազոտական գործունեություն
6. Արդյունքների ընդհանրացում և եզրակացություններ
7. Արդյունքների հանրայնացում
8. Հաջողությունների և սխալների վերլուծություն
9. Շտկողական գործունեություն
10. Նախագծի հրապարակային պաշտպանություն:

Նախագծային ուսուցման մեր փորձի վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ՝

1. Նախագծային ուսուցումն ավելի արդյունավետ է «Սովորողի կարողությունների զարգացում և հմտությունների ձևավորում» հիմնախնդրի լուծման գերակայության դեպքում:
2. Սովորողների մեծ մասը հակված է իրականացնելու միջնաժամկետ նախագծեր:
3. Նախագծային ուսուցումն արագացնում է օտար լեզուների յուրացումը:
4. Նախագծային ուսուցումը ներդաշնակեցնում է անհատի զարգացման մրցակցային և համագործակցային հարացույցները:
5. Երկարաժամկետ նախագծի իրականացումը գիտական մտածողության ձևավորման անկյունաքարն է:
6. Նախագծային գործունեության ընթացքում սովորողի գնահատումը գերադասելի է երկբալանոց՝ կարող է շարունակել մասնակցությունը նախագծին կամ չի կարող, իսկ նախագծի ամփոփման ժամանակ սովորողի ձեռք բերած արդյունքների գնահատումը

հարկ է, որ հենվի ինքնագնահատականի և խմբի մյուս անդամների գնահատականի, ինչպես նաև հրապարակային պաշտպանության արձագանքների վրա:

7. Նախագծային ուսուցման մեթոդի բացարձականացումը վտանգում է սովորողի անհատականության զարգացման համակողմանիությունը և աղքատացնում է մանկավարժական գործիքների արհեստանոցը:
8. Անհրաժեշտ է միշտ ուշադրության կենտրոնում պահել նախագծային ուսուցման միջառարկայական բնույթը:
9. Իրականացված նախագծի արդյունքների հրապարակային պաշտպանությունը բարձրացնում է սովորողի ինքնագնահատականը և նպաստում նրա սոցիալականացմանը:

Մաս 10.

Նախագծային գործունեության գնահատումը

Նախագծային գործունեության ընթացքում սովորողի գնահատումը գերադասելի է եռաբալանոց՝ չի կարողանում կամ ցանկանում շարունակել նախագծային գործունեությունը և կոնկրետ արդյունքները բացակայում են (թվանշանային գնահատմամբ մինչև 6, միայն դասարանական աշխատանքների կատարման դեպքում, մինչև 8, նաև տնային այլ աշխատանքների կատարման դեպքում); շարունակում է նախագծային գործունեությունը (թվանշանային գնահատմամբ մինչև 9, դասարանական աշխատանքների լիարժեք կատարման դեպքում); սովորողի նախագծային գործունեությունն արժանանում է արտակրթահամալիրային մասնագետների հրապարակային խրախուսանքին (թվանշանային գնահատմամբ 10): Նախագծի ամփոփման ժամանակ սովորողի ձեռք բերած արդյունքների գնահատումը հարկ է, որ հենվի ինքնագնահատականի և խմբի մյուս անդամների գնահատականի, ինչպես նաև հրապարակային պաշտպանության արձագանքների վրա:

Մաս 11.

«Այլընտրանքային պատմություն» նախագիծ. աշխատանքների օրինակներ

1. Օտտո Լեոպոլդ ֆոն Բիսմարկ (ուսումնական ֆիլմ)
2. Մորգենթաու. Հայ ժողովր բարեկամ, թե՞ միջազգային սադրիչ (թարգմանություն)
3. «Այլընտրանքային պատմություն» նախագծի շնորհանդեսը
4. Նոր տարվա սնահավատություններից (շարադրանք տարբեր աղբյուրների օգտագործմամբ)
5. Աթեիստ, ով ապացուցեց Աստծո գոյությունը (թարգմանություն)
6. Հիպերբորեա (մաս 10). թարգմանություն միջին անգլերենից
7. Փաստագրական ֆիլմերի վերլուծություն
8. Աբրահամ Լինքոլնի սպանության վարկածները (հետազոտություն)
9. Անհատի երջանկությունը և հոգու ուրախությունը (Մտորումներ Գարեգին Նժդեհի «Երջանկության պրոբլեմը» հոդվածի շուրջ)
10. Էրազմ Ռոտերդամցի. «Գովք հիմարության» (վերլուծություն)
11. Ժոզեֆ Ժյուստ Սկալիգեր (հեղինակային հոդված)
12. Փոխում ենք սելջուկ-թյուրքերին ներկայացված մեղադրանքի հոդվածը (հեղինակային հոդված)
13. Բուդդայականություն (մեկնաբանություններ)
14. Նախագծի փուլային ամփոփում
15. Մինչկոլումբոսյան Ամերիկայի կենդանի աստվածները (թարգմանություն)
16. Անհայտ «Ատլատիդաները» (թարգմանություն)
17. Մահվան գնացողները (թարգմանություն)
18. Միայն փաստեր - 14
19. Շումերի գիրը (վերլուծություն)
20. Լիդերություն (հեղինակային հոդված)
21. Հին Եգիպտոս. արվեստ, մշակույթ և գիր (հեղինակային հոդված)
22. Հանդուրժողականությունը և ավանդույթները (հեղինակային հոդված)
23. Ինն Անհայտների միությունը (թարգմանություն)
24. Գիտությունը և կրոնը մարդու ծագման մասին (հեղինակային հոդված)
25. Թվերի պատմությունը. մաս առաջին (հեղինակային հոդված)
26. Ամերիկային նետված մարտահրավեր (թարգմանություն)

27. Հին հայկական դիցարանը (հեղինակային հոդված)
28. Ինդիգո երեխաներ (հեղինակային հոդված)
29. Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկի պատվիրանը մեր օրերի համար (վերլուծություն)
30. Ֆիդայական պայքար. նպատակներ, արդյունքներ և դասեր (տեսակետ)
31. Ես, Հիտլերը և հրեաները (բանավեճի հրավեր)

Եզրակացություններ և առաջարկություններ

1. Այլընտրանքային պատմությունը միաժամանակ և՛ պատմագիտության բաղկացուցիչ է, և՛ սահմանային գիտություն, և՛ ուսումնական դասընթաց, և՛ մեթոդաբանական համակարգ;
2. Այլընտրանքային պատմությունը հասարակական գիտությունների զարգացման անհրաժեշտ խթանիչ է, քանզի գիտական մտքի առաջընթացի երեք պայմաններից՝ նոր գիտելիք, նոր տեսանկյուն, նոր խորապատկեր, երկուսի անբաժան ուղեկիցն է;
3. Այլընտրանքային պատմությունը մարդ անհատի հոգու և մտքի ներուժների համադրված թռիչքի հարթակներից մեկն է;
4. Այլընտրանքային պատմությունը որպես մեթոդաբանական համակարգ կիրառելի է բոլոր գիտությունների, արվեստների, արհեստների և մարզաձևերի հանրակրթական ուսումնասիրման ոլորտում;
5. Այլընտրանքային պատմությունը տարբեր բնույթի, ծավալի, խորության, մակարդակի և ժամկետայնության նախագծերի ձևակերպման աղբյուր է և իրականացման ճանապարհի ուղեցույց;
6. Առաջարկում ենք «Այլընտրանքային պատմություն» գիտամեթոդական համակարգի մասին տեղեկատվությունը ներառել ուսուցիչների պարտադիր ատեստավորման բովանդակության մեջ;
7. Առաջարկում ենք «Այլընտրանքային պատմություն» նախագիծը և նրա էությունից բխող նախագծերը, օրինակ՝ «Պատմության վերակառուցում», «Պատերազմը՝ կրթության գործիք», «Բոնադատվածներ», «Միասնական Տիեզերք», «Մեր գերդաստանը», ներառել ՀՀ հանրակրթական դպրոցներին առաջարկվող համագործակցային նախագծերի ցուցակում;
8. Առաջարկում ենք կազմակերպել այլընտրանքային պատմության թեմաներով գրված հետազոտական աշխատանքների քննարկման կլոր սեղաններ;
9. Առաջարկում ենք «Այլընտրանքային պատմություն» մեթոդաբանական համակարգը փորձարկել գրականության, բնագիտական առարկաների և խաղային մարզաձևերի դասավանդման ընթացքում:

Իսկ պատմաբանը (իմա՝ Պատմության հեռու և մոտիկ թավուտներով առաջնորդող անհատականությունը) պետք է լինի անցյալի ժամանակակցի իրատեսական ընկալման, ներկայից նետված գիտական հայացքի պաշտպանի

կոչման և ապագային անհրաժեշտ ազգ – պետություն – անհատ եռամիասնության արարման կրողը:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. «Այլընտրանքային պատմություն» նախագծի մասնակից սովորողների բլոգները
2. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կայքը
3. «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հետազոտական վարժարանի և միջին դպրոցի ենթակայքերը
4. Альтернативная история имеет право на существование
5. Альтернативная история с альтернативными историками
6. Альтернативная история. Циклопедия
7. Базовые понятия. Альтернативная история
8. Проектное обучение
9. Проектные методы обучения
10. Проектный метод как современный метод обучения иностранному языку
11. Современные образовательные технологии: проектная деятельность. Проектный метод в школьном образовании
12. Теория проектного обучения
13. Технология проектного обучения
14. Технология проектного обучения
15. Шокирующая теория альтернативной истории человечества
16. Այլընտրանքային պատմությունը կինոյում
17. Գործընկերներիս և իմ իրականացրած, իրականացվող նախագծերը
18. Մեդիամաքսի «Այլընտրանքային պատմություն» նախագծի բացատրականից